CHANGES PROGRAM | ARMENIAN

Ընտրել Էլեկտրականութեան Սակագնային Ծրագիր

Գումարը որ կը վճարէք էլեկտրականութեան համար կախում ունի թէ որ սակագնային ծրագիրը կ՚ընտրէք: Կարելի է ընտրել սակագնային ծրագիր մը որ լաւագոյնն է ձեր եւ ձեր ընտանիքին համար: Որոշ ծրագիրներ կախում ունին թէ որքան էլեկտրականութիւն կ՚օգտագործէք, իսկ ուրիշներ կախում ունին թէ երբ կ՚օգտագործէք:

Ինչպէս Կը Չափուի Էլեկտրականութեան Օգտագործումը

Չափման միաւորը որ կոմունալ ծառայութիւններու ընկերութիւններ կը գործածեն որոշելու թէ որքան պէտք է վճարէք ձեր օգտագործած էլեկտրականութեան համար կը կոչուի քիլոուաթ-ժամ (քՎժ):

Օրինակ՝ եթէ կազ գնէք, կը վճարէք համեմատ գանի գալոն, կամ եթէ կտոր գնէք, կը վճարէք համեմատ քանի մէթր: Էլեկտրականութեան համար, կը վճարէք որքան էլեկտարական քիլոուաթ-ժամ կ՚օգտագործէք որոշ ժամանակի ընթացքին: Ձեր կոմունալ ծառայութիւններու ընկերութիւնը հաշվիչ կը գործածէ, որ կապուած է ձեր տանը՝ չափելու ձեր էլեկտրականութեան օգտագործումը: Մէկ քՎժ-ը հաւասար է մէկ ժամուայ ընթացքին 1,000 ուաթ օգտագործելը:

Սակագնային Ծրագիրներ

Իւրաքանչիւր կոմունալ ծառայութիւններու ընկերութիւն տարբեր սակագնային ծրագիրներ ունի: Դուք կրնաք ընտրել այն ծրագիրը, որ լաւագոյնը կը համապատասխանի ձեր ժամանակացոյցին եւ կարիքներուն:

Մակարդակով Սակագնային Ծրագիր

Ձեր էլեկտրականութեան սակագնային ծրագիրը կազմակերպուած է մակարդակներով: Իւրաքանչիւր հաշուարկային ժամանակաշրջանին կ՚սկսիք ամենացած մակարդակէն: Այս ձեր քիլոուաթ-ժամի Մակարդակ 1 հատկացումն է, որ ամենացած գինը ունի մէկ քՎժ-ի համար: Որքան աւելի էլեկտրականութիւն գործածէք, կը տեղափոխուիք այլ մակարդակի մէջ ուր մէկ քՎժ-ի գինը կը բարձրանայ: Էներգիայի ծախսերը ցած պահելու լաւագոյն միջոցն է սահմանափակել ենէրգիայի սպառումը որպէսզի հնարավորին նուազագոյն մակարդակով վճարէք:

Ժամանակային Օգտագործման Ծրագիրներ

Ժամանակային Օգտագործման Ծրագրի մէջ մէկ քՎժ-ի ծախսը կախում ունի օրուայ որ ժամուն կամ շաբթուայ որ օրը կ՚օգտագործէք էլեկտրականութիւն: Եթէ կրնաք էլեկտրականութիւն

շարունակութիւնը՝ ետեւի մասը

California Public Utilities Commission

505 Van Ness Ave.
San Francisco, CA 94102

415-703-2782
800-848-5580 (Toll Free)

cpuc.ca.gov

NOO 0623

օգտագործել այն ժամանակներուն երբ սակերը ամենացածն են եւ ելեկտրականութեան պահանջը ցած, կարելի է գումար խնայել այս ծրագրի միջոցով: Այս ծրագրին մէջ, որոշ ժամեր կը նկատուին գագաթնային ժամեր (երբ ամենաշատ ելեկտրականութիւնը կ՚օգտագործուի): Գագաթնային ժամերու ընթացքին օգտագործուող ելեկտրականութիւնը մէկ քՎժ-ի համար աւելի թանկ կ՚արժէ: Շատ դէպքերու ընթացքին, այս ծրագրի մէջ գագաթնային ժամերն են կեսօրէ ետք ժամը 4էն մինչեւ երեկոյեան ժամը 9ը: Գիները նաեւ տարբեր են շաբաթավերջի որոշ ժամերու ընթացքին:

Կան նաեւ տարբեր սակագնային ծրագիրներ անհատներու համար, որոնք արեւային ուժ կը գործածեն կամ ելեկտրական փոխադրամիջոցներ կը գշեն:

Ինչպէս Ընտրել Սակագնային Ծրագիր Մը

Սակագնային ծրագիր մը ընտրելու համար, նախ նկատի ունեցէք թէ ինչպէս եւ երբ ելեկտրականութիւն կ՚օգտագործուի ձեր տան մէջ:

- Կա՞ն օրուայ ընթացքին ժամեր երբ ձեր ընտանիքի բոլոր անդամները աշխատանքի են կամ դպրոց:
- Ե՞րբ է որ ձեր ժամանակացոյցը կը ներէ որ տնային ձեր գործերը կատարէք:
- Ձեր ընտանեկան ժամանակացոյցը դիւրաթե՞ք է: Կարելի է՞ փոխէք ձեր տան սարքերու օգտագործման օրերը կամ ժամերը:
- Կանուխ արթնցող է՞ք կամ գիշերը ուշ արթուն կը մնա՞ք: Ձեր աշխատանքային ժամանակացոյցը յաճախ կը փոխուի՞ կամ կանոնաւոր ժամանակացոյց է:

Իւրաքանչիւր տան կարիքները եւ ժամանակացոյցը տարբեր են: Եթէ կարելի է որ փոփոխութիւններ կատարէք թէ երբ կ՚օգտագործէք ելեկտրականութիւն, ինչպէս օրինակ փոխելով ձեր տնային գործերու ժամերը, կարելի է որ գումար խնայէք Ժամանակային Օգտագործման Ծրագրի միջոցով:

Որոշ ծրագիրներ կամ կոմունալ ծառայութիւններու ընկերութիւններ արտօնութիւն կու տան որ տարին մէկ անգամ փոխէք ձեր սակագնային ծրագիրը: Կան ուրիշներ որոնք կը պարտադրեն որ 12 ամիս պարտաւորութիւն ստանձնէք մնալու սակագնային ծրագրի մը մէջ նախքան փոխելը: Սակագնային ծրագրի փոփոխութիւն ընելը կարելի է երկու հաշուարկային փուլ տեւել մինչեւ ուժի մէջ մտնէ: Կոմունալ ծառայութիւններու ընկերութիւնները ունին առցանց միջոցներ որոնք կրնան ձեզ ուղղութիւն տալ թէ որ ծրագիրը ընտրէք: Ձեր CHANGES կազմակերպութիւնը կրնայ օգնել ձեզ այն առցանց միջոցներով եւ ընտրելու սակագնային ծրագիր մը որ լաւագոյնն է ձեր եւ ձեր ընտանիքին համար:

Յաւելեալ տեղեկութիւններու համար՝

Այցելեցէք: www.cpuc.ca.gov/team-and-changes

Ե-նամակ: cabteamandchanges@cpuc.ca.gov

California Public Utilities Commission